ՔԱՎՈՐԸ ՀԱՅՈՑ ՄԵՋ
(Ըստ աղձնիքահայերի ազգագրական տվյալների)

ՌԱՖԱՅԵԼ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

Հայոց ավանդական ընտանեկան կենցաղում քավորի դերը շատ մեծ էր: Առանց նրա մասնակցության չէր կատարվում ընտանեկան և ոչ մի նշանավոր իրադարձություն, ոչ մի հանդես: Քավորը մեծ հարգանք ու պատիվ էր վայելում. ընտանեկան բոլոր տոնախմբությունների և սգո արարողությունների անցկացման գլխավոր դերակատարն էր ու պատվավոր ղեկավարը: Քավորի դերը հատկապես մեծ էր հարսանեկան ծեսերի և կնունքի ժամանակ, որոնցում առավել ցայտուն էին ի հայտ գալիս նրա լայն գործառույթների կարևորագույն տարրերը: Նա նորաստեղծ ընտանիքի ամենահարգված ու հեղինակավոր անձն էր, խորհրդատուն և վեճերի հաշտարարը: Քավորի յուրաքանչյուր այցը համընտանեկան իրադարձություն էր, իսկ խոսքը՝ օրենք: Ոչ մի կարևոր հարց, առանց քավորի միջամտության, ավարտին չէր հասնում: Անգամ եթե սանիկներից մեկին սպանեին, և սպանողի ընտանիքից քավորը հաշտության միջնորդություն աներ, թշնամությունը կվերանար[1]: Քավորը սրբություն էր ոչ միայն ազգանդամ ընտանիքի, այլև ողջ ազգատոհմի համար: Երբ քավորն ու քավորկինը այցելում էին սանիկների տուն, տնեցիներին արգելվում էր բարձրանալ տան կտուրը կամ անցնել տան հետևի կողմով. դա քավորի նկատմամբ անպատվություն էր համարվում[2]: Քավորի անկողնու վրա նստելը, նրա տան կտուրը բարձրանալը «մեղք» էր համարվում: Սովորույթի համաձայն՝ հարսն ու սանամայրը երբեք չպիտի խոսեին քավորի հետ, մինչև անգամ նրան հեռվից տեսնելիս թաքնվում էին և նրա տան առջևով բնավ չէին համարձակվում անցնել[3]: Հայաստանում բավական տարածված են եղել այն ավանդազրույցները, որոնց մեջ պատմվում է քավորի ու սանամոր իրարից խուսափելու մասին. քավորը վերջինիս տեսել է իր հարդանոցից հարդ գողանալիս[4]: Որոշ տարբերակներում սանամոր խնդրանքով աստված քար է դարձնում նրան, որովհետև քավորն աղբյուրի մոտ տեսել էր նրա բոբիկ ոտքերը. ականատես լինելով քավորի

---

[1] *Տե՛ս Ռ. Ն ա հ ա պ ե տ յ ա ն. Դաշտային ազգագրական նյութեր (այսուհետև՝ ԴԱՆ), տ. 3, էջ 9-10:*

[2] *Տե՛ս ԴԱՆ, տ. 2, էջ 157:*

[3] *Տե՛ս ԴԱՆ, տ. 4, էջ 112:*

[4] *Սանամայրն իր քավորի հարդանոցից միշտ գոգնոցով հարդ է գողացել, որովհետև աղքատ է եղել և չի կարողացել փողով գնել: Մի անգամ էլ քավորը նկատել է այդ: Սանամայրը ամոթից երկինք է բարձրացել՝ փախչելիս թափելով հարդը: Հարդի հետքատեղը կոչվել է «սանամոր իզ». ըստ Բիթլիսում պահպանված այդ ավանդության, մինչև հիմա էլ երկնքի վրա երևում է այդ հարդի հետքը (տեղեկությունները մեզ հաղորդել է բիթլիսցի Աղավնի Ասատրյանը 1973 թ. Աշտարակի Նազրվան գյուղում. տե՛ս ԴԱՆ, տ. 2, էջ 2-3):*

և սանամոր սիրաբանությանը, աստված պատժում է նրանց՝ երկուսին էլ քար դարձնելով: Մի այլ զրույցում հարդի գողության մոտիվը բացակայում է. հարսն անցել է քավորի երդիկով, և նրա հետքը մնացել է երկնքում, որ կոչվում է Սանամոր քաշ (հետք)[5]: Բերված առասպելաբանական զրույցների հիմքն է կազմում ամուսնաընտանեկան հարաբերություններում գործող սովորութահիրավական արգելքների խախտումը և դրա հետևանքով կրած աստվածային պատիժը: Այդ արգելքը հիմնականում վերաբերում է սանամոր և քավորի միջև սեռական հարաբերությունների բացառմանը: Ըստ բանագետ Ս. Հարությունյանի՝ որևէ իրողության արգելում առհասարակ ենթադրում է տվյալ իրողության հնարավոր դրսևորում, որի առաջ բերած ինչ-ինչ բացասական հետևանքները կանխելու համար դրանց վրա դրվում է որևէ արգելք: Բացառություն չի կազմում նաև սանամոր և քավորի միջև սեռական հարաբերությունների սովորութային արգելքը[6]:

Հարսանիքի ժամանակ փեսայի մայրը հարսնառը դիմավորելիս համբուրում էր քավորի ծունկը, այնուհետև՝ փեսայի այտերը: Հարսը պարտավոր էր համբուրել սկեսրայրի և քավորի աջ ձեռքերը՝ խոնարհված ու ձախ ձեռքը կրծքին պահած[7]: Երբ քավորը սանահոր տուն էր այցելում, բոլորը հոտնկայս էին դիմավորում և սեղանի գլուխ հրավիրում նրան:

Այս երևույթը հետաքրքրել և այժմ էլ հետաքրքրում է ազգագրագետներին, բանագետներին, որոնք քավորի կարգավիճակի առաջացումը տանում են դեպի մարդկության պատմության հնագույն ժամանակները: Այս հարցի վերաբերյալ իրարամերժ շատ վարկածներ են առաջադրվել, բայց, այսուհանդերձ, քավորի կարգավիճակի գաղտնիքները ցարդ մնում են չբացահայտված: Խ. Սամուելյանը, անդրադառնալով քավորության հիմնադրույթին որպես սոցիալական ինստիտուտի, գրել է, որ քավորությունը «մի մնացուկ է այլափոխված ձևով, որը տոհմային հասարակության քայքայումով՝ իր մեջ պահպանել է արխաիկ տոհմապետի կամ տոհմային ավագի ֆիկցիան նոր հասարակական պայմաններում, ուր տոհմային համայնքի տրոհումով նրա նախկին սոցիալ-տնտեսական նշանակությունն իր տոհմապետական ավագության և իշխանության սկզբունքի վերապրուկով գեթ անվանորեն վերապահվել է նոր առաջացած ընտանեկան համայնքների կողմից որոշ անձերի նկատմամբ ու ժամանակի ընթացքում վերածվել է իրավաբանական սովորույթի, անգիտակցական ծիսակատարման»[8]: Ըստ նրա՝ քավորի անձի մեջ պահպանվում էին տոհմական նահապետի այուզերեն իրավունքը, պատիվն ու հարգանքը: Այդ բանն առանձնապես զգացվել է կանանց, մասնավորապես հարսների ու սանամայրերի պահվածքից, որոնք հատուկ ակնածանք են տածել քավորի հանդեպ, խուսափել են նրա աչքին երևալուց: Այս ավանդույթները և խուսափման սովորույթները հիշեցնում են հայրիշխանության հասարակական ձևերում առաջա-

---

[5] *Այս մասին տես Ա. Ղ ա ն ա լ ա ն յ ա ն. Ավանդապատում, Երևան, 1969, էջ ՀԹ, Ը:*

[6] *Տե՛ս Ս. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. Հայ առասպելաբանություն, Բեյրութ, 2000, էջ 246:*

[7] *Տե՛ս ԴԱՆ, տ. 4, էջ 7-13, էջ 113:*

[8] *Տե՛ս Խ. Ս ա մ ո ւ ե լ յ ա ն. Մայրական իրավունք.– «Ազգագրական հանդես» (այսուհետև՝ ԱՀ), գ. XVIII, Թիֆլիս, 1908, № 2, էջ 59-89:*

ցած սովորութական իրավունքի արգելական նորմերից մեկը, որը ժամանակին ուղղված է եղել մայրիշխանության պայմաններում տիրապետող ամուսնական խառնակ հարաբերությունների դեմ: Բազմաթիվ ժողովրդական սովորույթներում քավորը միշտ հանդես է գալիս իբրև նորափեսայի ընտանիքի լիիրավ անդամ: Գիտնականը դա կապում է մայրիրավական շրջանի հետ, երբ առաջին գիշերվա իրավունքը տոհմապետի կամ ցեղապետի արտոնությունն է եղել[9]: Այս բացատրությունը, իհարկե, չի կարող լրիվ պարզել քավորի կարգավիճակի առաջացման ու պահպանման պայմանները, քանի որ, ըստ բացատրության, տոհմի ավագը քավորի նախատիպն է, իսկ ինչո՞ւ և ե՞րբ վերացավ տոհմապետի գործառույթը, իսկ նրա երկրորդ գործառույթն այդքան կենսունակ եղավ:

Գ. Իփեկյանը, ուսումնասիրելով հարսանեկան շարքի կենտրոնական դեմքի՝ քավորի տեղն ու դերը, անդրադառնում է նաև քավորի կարգավիճակի առաջացման հնագույն արմատներին: Նա քավորության առաջացման սկիզբը աղերսում է քրմության շրջանի և դրա դերի հետ՝ քավորի գործառույթը նույնացնելով հեթանոսական շրջանի քրմի կերպարին[10]: Ե՛վ Գ. Իփեկյանը, և՛ Խ. Սամուելյանը, բազմաթիվ սովորույթներից ելնելով, քավորի հետ էին կապում վաղնջական դարաշրջանում նորահարսի հետ առաջին գիշերվա իրավունքը, սովորույթ, որը խորհրդային շրջանի հետազոտող Մ. Կոսվենը համարում է որպես մայրիշխանական բնակվածության վերապրուկ: Նա, չունենալով բավարար նյութեր, կարծիք է հայտնում, թե հայկական քավորը ոչ այլ ոք է, քան փեսայի քեռին[11]: Այս կարծիքը լիարժեք չէ, որովհետև նա հենվել է հյուսիսկովկասյան էթնիկական մի շարք ընդհանրությունների վերաբերյալ անբավարար և սահմանափակ նյութերի վրա, որոնք չեն արտացոլում ծեսերի ու սովորությունների այն բարդ համալիրը, որի միջոցով հնարավոր է բացահայտել քավորի ամբողջական գործառույթները:

Թեև այս տեսակետը պաշտպանում է նաև Է. Կարապետյանը, սակայն այն չի ապացուցվում ո՛չ պատմական և ո՛չ էլ կրոնական տեսակետներից: Ըստ նրա՝ քավորը եղել է հարսանեկան շարքի առավել ուշագրավ և կենտրոնական դեմքերից մեկը ու ներառել է նաև քեռու պարտականությունը: Քավորի դերի պատմահամեմատական ուսումնասիրությունից պարզվում է, որ քավորի մի շարք գործառույթներ նախկինում կատարել է քեռին: Է. Կարապետյանը գրում է, որ հարսանիքի ավելի հնավանդ տարրերում քավորի փոխարեն հանդես է եկել փեսացուի քեռին: Հարսանիքի գլխավոր պահը հարսնացուին փեսացուի տուն տանելն է, որը հայերի մեջ իրականացնում է քավորը, իսկ հյուսիսկովկասյան ժողովուրդների մեջ իրականացնում է քեռին: Վերջինս է ղեկավարում փեսային սափրելու, լողացնելու, զգեստավորելու, հարսին արգասավորությամբ օժտելու՝ գոտին կապելու, նրանց չար ուժերի ներգործությունից ձերբազատելու հետ կապված արարողությունները: Սրանք, ըստ Մ. Կոսվենի՝ նվի-

---

[9] *Տե՛ս* Խ. Ս ա մ ո ւ է լ յ ա ն. *Հին Հայաստանի կուլտուրան, հ. 1, Երևան, 1931, էջ 242-247, ն ո ւ յ ն ի՝ Հին Հայաստանի կուլտուրան, հ. 3, Երևան, 1941, էջ 86-87:*

[10] *Տե՛ս* Գ. Ի փ է կ յ ա ն. *Քավոր.– ԱՀ, գ. XXVI, Թիֆլիս, 1916, էջ 90-110:*

[11] *Տե՛ս* М. О. К о с в е н. Кто такой крестный отец.– “Советская этнография”, 1963, №3, с. 95-107, Этнография и история Кавказа, М., 1961, с. 68.

բագործման ծեսերի հետ են առնչվում, որոնցում հնում մեծ դեր է խաղացել փեսայի քեռին[12]: Է. Կարապետյանի կարծիքով, հարսի գոտին կապելը ևս հայկական հարսանիքի որոշ տարբերակներում կատարել է քեռին[13]:

Վ. Բդոյանն իր գրքի ծանոթագրության մեջ քավորի ճիշտ մեկնաբանությունը համարում է Խ. Սամուելյանի և Գ. Իփեկյանի վերը շարադրված վարկածների միասնությունը: Նա միաժամանակ նշում է, որ քավորի նախատիպ անձը հարսին առաջինը տիրելու իրավունք է ունեցել[14]: Մեր գրի առած դաշտային և հրատարակված ազգագրական նյութերն ավելի շատ վկայում են վերջին տեսակետի հավանական լինելու մասին: Միայն մատենագրական, պատմական, ազգագրական և այլ կարգի պատմահամեմատական ուսումնասիրություններով հնարավոր կլինի բացահայտել քավորի կարգավիճակի առաջացման պատճառները, տալ զարգացման դինամիկան՝ որպես հնագույն շրջանից եկող և մեր օրերում հարատևող սոցիալական նոր երանգավորմամբ հասկացություն:

Յուրաքանչյուր հայ ընտանիք ուներ իր քավորը, որը հիմնականում հանդես էր գալիս իբրև խաչեղբայր՝ հարսանիքի քավոր և կնքահայր: Հայոց մեջ, գրեթե ամենուրեք, քավորությունը ժառանգական, տոհմական էր, փոխանցվում էր սերնդեսերունդ: Հազվադեպ էին քավորին փոխելու դեպքերը, ինչը մեծ անպատվություն և անարգանք էր համարվում նրա նկատմամբ, արժանանում հասարակական պարսավանքի: Մասնակի դեպքերում քավորին փոխել են «խերով» քավոր չլինելու պատճառաբանությամբ. երբ նորահարսը ծնում էր միայն աղջիկներ, երբ նորածինները չէին ապրում կամ նորածինը մեռած էր ծնվում, կամ էլ մահանում էր ծնվելուց հետո, երբ տանը անհաշտություն կամ բաժանություն էր լինում: Նման դեպքերում էլ ասում էին՝ «քավորի ոտը մեր տան վրա չեկավ», «քավորի ոտը խերով չէր»: Նույնը ասում էին նոր հարսի համար՝ բեխեր ոտ:

Աշնակցի բանասաց Գրիգոր Կիրակոսյանի (Համզե Պճուկ) հավաստմամբ՝ իրենց տոհմական քավորությունը սկիզբ է առել իր ապուպապ՝ Հոպելից, որը քավոր էր ընտրել Խարզանի (Արզն, Արզան) շրջանի Քրդամանկ գյուղից Շլիֆոյին: Այս երկու ընտանիքների միջև քավորությունը տևել է 5 սերունդ, այն ընդհատվել է 1915 թ.՝ Մեծ եղեռնի ժամանակ: Դրանից հետո Հոպելի ողջ մնացած շառավիղները հանգրվանել են Արագածոտնի մարզի Թալինի ենթաշրջանի Աշնակ գյուղում: Այստեղ բանասաց Պճուկի եղբոր տղան՝ Մելիքը, սիրահարվում է Շլիֆոյի հեռավոր սերունդներից մեկի դստերը՝ առանց իմանալու իրենց քավորական կապի մասին: Երբ պարզվում է քավորության կապը, ամուսնությունը կանխվում է՝ մեղք համարվելով: Սա էլ առիթ է դառնում ընդհատված քավորությունը վերականգնելու համար[15]:

---

[12] *Տե՛ս* М. О. К о с в е н. История и этнография Кавказа (исследования и материалы). М., 1961, с. 68.

[13] *Տե՛ս* Э. К а р а п е т я н. Об одном персонаже армянской свадьбы.– ИФЖ, 1965, № 2, с. 212-214.

[14] *Տե՛ս Վ. Բ դ ո յ ա ն. Հայ ազգագրություն (համառոտ ուրվագիծ), Երևան, 1974, էջ 151:*

[15] *Տե՛ս ԴԱՆ, տ. 3, էջ 11-12:*

Գերդաստանի ճյուղավորման, բաժանքի ժամանակ, քավորությունը ևս ավագության սկզբունքով ճյուղավորվում էր: Գերդաստանի նահապետը հրավիրում էր քավորին և իր ազգի պատկառելի մարդկանց՝ «տան գլուխներին», ու պատվելով խնդրում քավորությունը շարունակել՝ ի դեմս քավորի որդիների, եղբայրների՝ համապատասխանաբար բաժանվող անհատական ընտանիքների քավորությունը ստանձնելով: Տոհմական քավորությունը, ըստ ավանդույթի, ստանձնում էր կրտսեր որդին: Քավորի ընտանիքի հետ մինչև 7-րդ սերունդը լրանալը արյունակից ազգակցության պես արգելվում էր խնամիության հաստատումը, այլապես մեղք էր համարվում: Քավորի մահվան դեպքում քավորությունը շարունակում էին որդիները, սրանց փոքր լինելու դեպքում՝ եղբայրներից մեկն ու մեկը: Մինչև XX դ. սկզբները, հարսանիքի քավորը դառնում էր նաև կնունքի քավոր, բայց միմյանց խաչքավոր չէին կարող լինել, մինչդեռ մեր օրերում խաչքավորությունը լայն տարածում է գտել:

Սասունում և Աղձնիքի լեռնային մյուս շրջանում, քավորին անվանում էին քավոր, *նրա հորը* ՝քաբաբ, *մորը* ՝քամամ, *սանիկին* ՝սանիկ, *իսկ սրա ծնողներին* ՝սանահեր, սանամեր[16]*: Հայաստանի տարբեր շրջաններում անվանել են նաև* կնքահայր, խաչեղբայր, խաչքավոր:

Ավանդական և ժամանակակից հարսանիքում քավորը ողջ հարսանեկան համալիրի ղեկավարն է, կարևոր դեր է խաղացել և այժմ էլ մասնակի դերակատարում ունի և՛ նախահարսանեկան, և՛ բուն հարսանեկան, և՛ ետհարսանեկան արարողությունների ժամանակ: Քավորի մասնակցությունը անհրաժեշտ է պսակի արարողության պահին՝ որպես եկեղեցական ծեսերի պաշտոնական վկայի: Նրա պաշտոնը անհրաժեշտ էր ոչ միայն հարսանեկան արարողությունների ժամանակ, այլև ամուսնացողների ապագա կյանքի և երեխաների ճակատագրի տնօրինման հարցում:

Կնունքի խորհուրդն իրագործող հիմնական անձինք քահանան, քավորն ու տատմերն էին: Եկեղեցում մանկանը կնքում էին բեմի ձախ կողմում գտնվող հատուկ ավազանում, իսկ տանը՝ թոնրի կամ թվեքի շուրջը, մեռոնաջրով լցված անգանակում *(հացի փայտե տաշտ): Տանը հիմնականում մահամերձ նորածնի կնունքն էին անում: Քահանան մանկանը ավազանում մեռոնով օծելուց հետո դնում էր քավորի թևերին, իսկ վերջինս էլ հանձնում էր տատմորը՝ մանկանը բարուրելու և ետ վերադարձնելու: Տատմորից մանկանը ետ ստանալիս քավորը տալիս էր դրամական նվեր: Կնունքի ժամանակ քահանան մեռոն է դնում մանկան բերանին, աչքերին, ականջների մեջ, պորտի վրա, ոտքերի տակ, քթանցքներին: Կնունքի արարողության ավարտին նորածնի մայրը ծնկաչոք մոտենում էր քավորին, խոնարհվում, համբուրում ոտքերը ու բարուրը վերցնում: Պսակի քավորն էր ընտրվում կնունքի քավոր[17]: Երբեմն, քավորի բացակայության դեպքում, երեխային կնքում էին ալյուրի մաղի վրա, որը փո-*

---

[16] *Տե՛ս նույն տեղում: Գամիրքում կնքապապին ասում էին* ընքապապ, *իսկ քավորկնոջը՝* ընքեմեր *(տե՛ս* Վ. Թ ե մ ո ւ ր ճ յ ա ն. *Գամիրքի հայերը.– «Հայ ազգագրություն և բանահյուսություն», հ. 1, Երևան, 1970, էջ 119):*

[17] *ԴԱՆ, տ. 2, էջ 120, 166-167:*

խարինում էր քավորին, «քավորություն էր անում»[18]*: Հայտնի է, որ հայերի մեջ քավորը պատվարժան և ընտանիքի ամենապատվավոր անձն էր: Նրա կերպարն ընտանեկան կենցաղի որոշ պարագաներում սերտորեն առնչվում էր օջախի ունևորության, արգասաբերության ու պտղաբերության գաղափարին: Հայոց կենցաղում հարստության, լիության, ունևորության հիմնական չափանիշը հացահատիկն ու դրանից ստացվող սննդամթերքներն էին համարվում: Բնականաբար, անընդհատ գործող ալյուրի մաղը ևս դիտվում էր որպես առատության և սրբության խորհրդանշան: Ուստի պատահական չէր քավորին ալյուրի մաղով փոխարինելու սովորույթը: Մանկանը քավորի թևերի փոխարեն դնում էին ալյուրի մաղի վրա:*

Ստորև ներկայացնենք աղձնիքահայերի ամուսնահարսանեկան արարողություններում քավորի դերակատարման վերաբերյալ մեր գրառած նյութերը:

Ամուսնահարսանեկան ողջ համալիրի ծիսական բոլոր արարողություններում քավորի դերն ավելի մեծ էր, քան նորապսակների հայրերի: Նրան նույնիսկ մասնակից էին դարձնում խոսքկապին, իսկ նշանդրեքը և հարսանիքը սկզբնավորվում էր նրան հրավիրելով: Քավորին ասում էին Կարմիր վկա. *սա, թերևս, այն նույն համալիրում է, ինչ և* Կարմիր հարսը, *որ նշանակում է նշանված, բայց դեռ չամուսնացած աղջիկ-հարս: Նույն իմաստն է արտահայտում* կարմիր–կանաչդ կապեմ, *որ նշանակում է* նշանեմ. *և այս իմաստն ավելի ստույգ է, քան երբ* կանաչ-կարմիրը *հասկանում են հարսանեկան ծեսի փեսայի կոսբանդը:* Կարմիր վկա*-ի իմաստային համալրում է նաև քավորին տրված* պատճառավոր *անվանումը, որովհետև առանց քավորի աղջիկ ուզել հնարավոր չէր, քավորը ոչ միայն միջնորդն էր ապագա խնամիների միջև, այլև* համոզողը, խոսք առնողը, գործը գլուխ բերողը[19]*: Քավորի վերաբերյալ ժողովրդի մեջ պահպանվում է կոդ-բանաձև. «Քավորը արևից առաջ է» կամ նշանից հետո փեսայի հոր խոսքերը քավորին. «Քավոր ջան, ես խմել (օղի) եմ, գառ եմ առել, գառս ծախել, ձագ եմ առել: Առնտուրս շնորհավոր»*[20]*:*

Նշանդրեքից մի քանի օր առաջ փեսացուն և նրա հայրը, քավորին ընծայվող գառան վզին կարմիր ժապավեն կապած, գնում էին քավորկանչի՝ նրան նշանդրեքի ծեսին մասնակից դարձնելու համար: Իսկ հարսանիքին քավորին հրավիրելու գնում էին ուրբաթ օրը՝ առավոտյան՝ նվագով և պատկառելի տարիքի ու հարգարժան նահապետի առաջնորդությամբ: Քավորին հարսանիքի

---

[18] *Տե՛ս Վ. Պ ե տ ռ ո յ ա ն. Սասնա ազգագրությունը, Երևան, 1965, էջ 278: Հարքում երեխայի բարուրը մաղի վրա էին դնում կնունքից հետո (տե՛ս Բ ե ն ս է. Բուլանրխ կամ Հարք գաւառ.– ԱՀ, գ. V, Թիֆլիս, 1889, էջ 127):*

[19] *Մուսալեռում, մեր գրառած նյութերի համաձայն, խնամախոսության ժամանակ, երբ քահանան հանդիսավորապես հայտնել է այցելության նպատակը, աղջկա հայրը, կնքահորը մեծարելու համար, ասել է. «Ես աղջիկ չունիմ, աղջիկն իրենն է» - մատնացույց անելով քավորին: Եվ, տղայի կողմը նվերներ է մատուցել քավորին՝ աղջկա ձեռքը խնդրելու հարցում նրա հավանությունը ստանալու համար:*

[20] *Նյութերը՝ մեկնաբանություններով հանդերձ, մեզ սիրով տրամադրեց բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Արուսյակ Սահակյանը:*

հրավիրելու այդ ծեսը կոչվում է կտրվածք*: Հրավիրվում էին նաև քավորի մերձավոր հարազատները:*

Շատ բնակավայրերում հարսանիքից առաջ փեսայի հայրը քավորի հետ այցելում էր գերեզմանոց՝ հանգուցյալներին հոգեհաց տալու համար: Փեսան քավորի հետ շրջում էր բոլոր այն տները, ուր վերջին մեկ տարվա ընթացքում մահացող է եղել:

Հարսանիքին մորթվող երինջը արնի կողմը դարձնելով մորթելու իրավունք ուներ միայն քավոր դարձած և արու զավակներ ունեցող անձը, հակառակ պարագայում «այլոց մորթուկը հարամ էր»[21]: Զոհի արյունով քավորը խաչ էր անում փեսայի ճակատին, արյան մեջ էր մտցնում բացված կողպեքը կամ դաշույնի սայրը և այծի մազից հյուսված թելը հանգույց էր անում, կողպեքը բանալիով փակում, դաշույնի սայրը մտցնում պատյանի մեջ. սրանով «կապվում», «փակվում», «արգելակվում էին» չար ոգիները, չարակամ տրամադրված մարդկանց մտադրությունները: Այս հմայական գործողությունը գրեթե ամենուրեք կատարում էր քավորը:

Ուրբաթ օրը հարսանիքի մսացուի վզից կախում էին կարմիր խնձորի շարան, մորթում էին զուռնայի հնչյունների ներքո: Այդ նույն հմայական արարողությունը Բաղեշ քաղաքում կատարում էին հարսնածի *վերադարձին, երբ փեսայի հոր տան մուտքին հավ էին մորթում, որի թարմ արյան շիթով արնոտում էին կողպեքը, քավորը այն փակում էր, բանալին պահում էր իր մոտ, իսկ կողպեքը տալիս էր փեսայի մորը[22]: Քավորը բացում էր կողպեքը նորապսակների առագաստի անկողնում՝ բանալին հանձնելով փեսայի մորը:*

Փեսայի զգեստները ազապչարիների խմբային երգերի ուղեկցությամբ հագցնում էր քավորը: Վերցնելով փեսայի հագուստը, քավորը ցույց էր տալիս շրջապատողներին և ասում. «Տեսեք՝ մեր թագավորն ինչ ունի»: Ներկաները միաբերան կանչում էին՝ շնորհավոր: Քավորը հագցնում էր շորերը, իսկ շրջապատող երիտասարդներն ամեն կերպ փորձում էին մի բան թռցնել և վերադարձնել քավորից որևէ ընծա ստանալուց հետո միայն: Իսկ սափրելու ծեսի ժամանակ վարսավիրը, ստեպ-ստեպ սափրումը ընդհատելով, քավորից նվեր էր պահանջում: Հարսին հագցնելու ժամանակ հարսը քավորից ստանում էր մետաքսե գլխաշոր, որ կրելու էր մինչև առագաստը: Եթե առագաստին հաջորդող առավոտյան նկատվեր, որ քավորի նվիրած մետաքսե «շալը» հարսի գլխին չէ, ուրեմն նորապսակները «մեկտեղված» էին, այսինքն՝ բարեհաջող էր ընթացել առագաստը: Աղձնիքի հովտային շրջաններում հարսի զգեստավորմանը՝ գոտին կապելուն, քողը ամրացնելուն մասնակցող եղբայրը, քրոջ հագուստի զանազան տարրերի մեջ որևէ «թերություն» հայտնաբերելու կամ հարսի չափով չլինելու պատրվակով քավորից պահանջում և ստանում էր դրամական նվեր[23]: Հարսի զգեստները հագցնողը պետք է լիներ արու զավակի տեր ե-

---

[21] *Տե՛ս «Մասիս», 1895, № 3773, էջ 1094-1095:*

[22] *Տե՛ս ԴԱՆ, տ. 1, էջ 79:*

[23] *Տե՛ս ԴԱՆ, տ. 13, էջ 19-20, 99:*

րիտասարդ կին, իսկ հարսի գոտին կապում էր կա՛մ փեսայի հայրը, կա՛մ քավորը՝ հարսի բազմազավակ լինելու ակնկալիքով:

Խարզանի շրջանի հովտային հայկական գյուղերում, երբ հարսին հոր տանից հանելուց առաջ հագցնում էին, եղբայրը բացականչում էր. «Խնամիներ, շապիկը հարսի գլխից չի անցնում, ի՞նչ անենք»: Քավորը առաջ էր գալիս և 1 մեճիդիե (օսմանյան դրամ) տալիս, որից հետո զգեստավորումը ավարտին էին հասցնում:

Շատ վայրերում հարսի զգեստները հագցնելիս գոտին կապում էր քավորը: Նա գոտին երեք անգամ պտտում էր հարսի գլխավերևում կամ նրա գոտկատեղի շուրջը՝ ձախից աջ, ապա խփում էր հարսի ուսերին ու ասում. «Աստված քեզ որդի տա»: Քավորկինն էլ հարսի գլխին էր գցում հարսանեկան քողը: Մեկ այլ դեպքում, երբ հարսին զգեստավորում էին, հրավիրվում էր քավորը՝ հարսի գոտին կապելու համար: Նա, նախքան կապելը, գոտին երեք անգամ հարսի գլխավերևից գցում էր հարսի ոտքերի առջև: Գոտին հարսի գլխավերևում պտտեցնելիս կամ գցելիս քավորը, թեթևակի խփելով հարսի ուսին, ասում էր. «Աստված քեզ մի որդ տղա տա» կամ էլ՝ «յոթն ինձ նման, մին քեզ նման»: Պատահում էր, որ հարսի եղբայրն էր գոտին երեք անգամ հարսի գլխավերևը պտտեցնում «յոթ մանչ և մեկ աղջիկ» ունենալու մաղթանքի խոսքեր ասելով[24]: Ուշագրավ է, որ աղձնիքյան դաշտային ազգագրական նույն նյութերի համաձայն՝ սկեսրայրն է կապում և արձակում հարսի գոտին, իսկ հարսը յոթ անգամ համբուրում է սկեսրայրի ծունկը[25]: Ըստ Ե. Լալայանի՝ «մշեցիների մեջ չկար այն սովորությունը, որ քավորը կապեր հարսնացուի գոտին, միայն տեղի էր ունենում այն, որ երբ հարսնացուին կամենում են առաջ բերել, հարսնացուի եղբայրը և կամ մոտիկ մի ազգական բռնում է դուռը և թույլ չի տալիս, մինչև որ քավորից մի գոտի նվեր չի ստանում: Այդ գոտին կոչվում էր «աղբրր գոտի»[26]:

Բազմազավակ քավորի կամ երբեմն փեսայի հոր կողմից հարսի գոտին կապելու ծիսական արարողությունը խորհրդանշում էր ուժի, արգասավորության փոխանցման գաղափարը, քանզի երիտասարդ կնոջ գոտին սեռական խորհրդանիշ էր համարվում: Հայաստանի այլ շրջաններում, օրինակ՝ Լոռիում, հարսի գոտին կապում էր շատ որդիներ ունեցող մի որևէ անձ կամ կնոջ քավորը[27]: Արարատյան դաշտի գյուղացիների մեջ սովորություն կար, երբ նորապսակ կինը չէր հղիանում, քավորը տանում էր նրան ս. Հակոբի աղբյուրը և քանդում այնտեղ նրա գոտին՝ արտասանելով սահմանված կախարդական բառեր: Կանանց գոտին, կուսության կամ սեռականության խորհրդանիշ լինելով, վերը նշված ծեսերի մեջ, ըստ Խ. Սամուելյանի, այլաբանորեն արտահայտում է այն իմաստը, որ կինն իր կուսությունն իբր թե զոհաբերում է տվյալ սրբերին կամ

---

[24] *Տե՛ս «Բյուրակն», 1889, թիվ 29, էջ 457:*

[25] *Տե՛ս Յ. Տ ո տ ո ւ խ յ ա ն. Գավառական սովորություն ամուսնության (Խուլթիկ գյուղ).– «Մասիս», 1885, № 3763, էջ 851-852:*

[26] *Տե՛ս Ե. Լ ա լ ա յ ա ն. Մուշ-Տարոն.– ԱՀ, գ. XXVI, Թիֆլիս, 1916, էջ 67:*

[27] *Տե՛ս Ե. Լ ա լ ա յ ա ն. Բորչալու գավառ.– ԱՀ, գ. X, Թիֆլիս, 1903, էջ 52:*

ենթադրյալ սեռական հարաբերություն է ունենում այդ սրբերի հետ[28]: Մեր կարծիքով, այս ծեսերում քավորը ներկայանում է որպես սրբազան կերպար:

Հարսանեկան քողը ևս կապում էր քավորը, երբեմն էլ՝ փեսայի հայրը՝ հարսին առողջ, երջանիկ մայր, շատ զավակների տեր լինելու մաղթանքի խոսքեր հղելով[29]:

Գյուղերուրս կատարվող հարսանեկան արարողությունը հարսնացուի տանը ավարտելուց հետո, ուշ գիշերին հարսնածի հյուրերը հյուրընկալվում էին հարսի ազգական-հարևանների տները, բացի քավորից, փեսայից և նրանից անբաժան ազապբաշուց, *որոնք գիշերում են հարսի հոր տանը: Հարսին հոր տնից հանելու պահին, Խուլթիկ գյուղի սովորույթի համաձայն, մեջտեղ էին բերում յոթ լավաշ, որոնք մեջտեղից ձգելով կիսում էին հարսի հայրական տան և փեսայի քավորները: Հարսի հայրական տան քավորը իր ձեռքի հացը բաժանում էր հարսի տնեցիներին, իսկ փեսայի քավորը իր բաժինն ուղարկում էր փեսայի տան անդամներին: Այս ծիսական արարողությունը հայտնի էր «հաց կիսել» անվամբ[30]:*

Հոր տնից հանելիս՝ հարսի մի կողմն անցնում էր քավորկինը, մյուսը՝ հարսնաքույրը, իսկ փեսան քավորի և ազապբաշու ուղեկցությամբ էր մշտապես: Հարսանեկան երթին փեսայի, քավորի, ազապբաշու չմասնակցելու դեպքում՝ հարսնառը առաջնորդում էր փեսայի հայրը, որը փոխարինում էր քավորին՝ նրա բոլոր գործառույթներով: Աղձնիքի հովտային շրջաններում հարսին ձի նստեցնելու պահին ասպանդակը բռնած հարսնաքույրը քավորից պահանջում էր իր նվերը, որը ստանալուց հետո քավորին թույլատրվում էր օգնել հարսին հեծնել ձի[31]:

Աղձնիքի շատ տեղերում քավորն էր առաջնորդում հարսնածի երթը: Վերադարձին հաճախ բնակավայրի սահմանի մոտ հովիվը մի խոյ էր հանում հարսնածի դեմ. քավորը, իսկ հարսնածին չմասնակցելու դեպքում նրան փոխարինող փեսայի հայրը, խոյի ականջը կտրում ու արձակում է՝ դրա դիմաց տալով դրամական նվեր: Երբեմն էլ հարսնածին դիմավորում էին ջրով լի կժով:

Աղձնիքի Խարզան գավառակում հարսնածի վերադարձին երթին չմասնակցած փեսային մակար-ազապչարիները նստեցնում էին հարսնաձին, պտտեցնում գյուղի շուրջը՝ երգերի ու գոռում-գոչյունների ուղեկցությամբ, որից հետո

---

[28] *Տե՛ս Խ. Ս ա մ ո ւ ե լ յ ա ն. Հին Հայաստանի կուլտուրան, հ. 1, էջ 230:*

[29] *Տե՛ս ԴԱՆ, տ. 13, էջ 19: Ուշագրավ է, որ Մուսալեռում հարսանիքի նախորդ գիշերը հինայելու արարողության ժամանակ հինայել են և՛ հարսին, և՛ փեսային, և՛ քավորին: Այստեղ հարսանիքի նախօրեին, հարսնացուին տարել են քավորի տուն, մի գիշեր պահել, կնքամայրը լողացրել է սանիկին, իսկ կնքահայրը նվերներ է ստացել փեսայից՝ իր սանիկին ճանապարհելուց առաջ:*

[30] *Տե՛ս Յ. Տ ո տ ո ւ խ յ ա ն. նշվ. աշխ., էջ 851-852: Հարևան Մուշ գավառում, ըստ Ե. Լալայանի, հարսնացուի տան քավորը բռնում է հարսնացուի ձեռքը և տալիս է «թագվորի» քավորին, ասելով՝ «Սանիկս քեզ կհանձնեմ, քեզի ալ Աստծուն, կը խնդրեմ, օր մուխիաթ էղնիս (պաշտպանես)»: Քավորը պատասխանում է. «Անհոգ մնացեք, իմալ իմ աղջիկ, իմ աչքի լույսի պես կը պահեմ» (տե՛ս Ե. Լ ա լ ա յ ա ն. Մուշ-Տարոն.– ԱՀ, գ. XXVI, էջ 167):*

[31] *Տե՛ս Ռ. Ն ա հ ա պ ե տ յ ա ն. Աղձնիքահայերի ընտանիքը և ընտանեկան ծիսակարգը, Երևան, 2004, էջ 148:*

ուղեկցում քավորի տուն, որտեղ նա հյուրընկալվում էր մինչև ուշ երեկո: Որոշ գյուղերում հարսին հոր տնից ուղեկցում էին փեսայի տուն, իսկ փեսային՝ քավորի տուն: Այդ առիթով քավորի տան բակում գառ էր մորթվում: Այդ միջոցին, եթե հարսի «զինվորներից» մեկին հաջողվեր «գողանալ» փեսայի կոշիկը և հասցնել հարսին, նրանից կստանար մրգեղեն նվեր, իսկ եթե փեսայի «կտրիճներից» մեկին հաջողվեր «գողանալ» հարսի կոշիկը և հասցնել փեսային, քավորից կստանար նվեր[32]*: Երեկոյան քավորի տնից մակարների ուղեկցությամբ նվագով փեսային տանում էին հարսի հետ զուգավորելու և «կես պսակի» արարողությունը կատարելու՝ նորապսակների պարանոցներին փոքր խաչեր անցկացնելով: Նորապսակների միավորումը տեղի էր ունենում խնջույքից հետո՝ ուշ գիշերին կազմակերպվող պարահանդեսի ժամանակ, երբ քավորը, փեսայի ձեռքը բռնած, սպասում էր հարսի շքախմբին: Երկար քողով ծածկված հարսին մոտեցնում էին թագվորին, օղակում նրանց ճկույթները, ձեռքները տալիս վառվող զույգ մոմ, իսկ քավորկինը հարսի գլխավերևում պահում էր վառվող մոմերով զարդարված գաթան: Քավորը յուրաքանչյուր պարը ավարտվելիս «շաբաշ» էր տալիս նվագողներին: Հարսնորները հարս ու փեսայի մասնակցությամբ «ճկութին» պարեղանակը հնչելիս պարտադիր յոթ պտույտ շուրջպար էին բռնում:* Պարբաշին *քավորն էր՝ աջ ձեռքում պահած նախշուն կարմիր թաշկինակ: Ուշ երեկոյան, հարսանիքի ավարտին, քավորին, հարսն ու փեսային յոթ անգամ պտտեցնում էին թոնրի շուրջը*[33]*:*

Ուշագրավ է, որ մինչև առագաստ մտնելը՝ մեգդեղիլը*, Սղերդի շրջակա գյուղերում, «քանի պսակը վար չի առնված», փեսան մնում էր «կնքահոր տանը»*[34]*: Ըստ մեկ այլ տարբերակի՝ հարսնածի վերադարձին հարսին առաջինն առաջնորդում էին ոչ թե փեսայի, այլ քավորի տուն: Այնտեղ հարսին քավորը դիմավորում էր քավորասեղան բացելով և զգեստացու կտոր նվիրելով: Քավորի տանը հարսն իրավունք չուներ խոսելու, նստելու, ուտելու*[35]*: Սղերդում հարսի ու փեսայի պսակի «վար առնելու» առանձին արարողությունը տեղի է ունենում թոնրի վրա, պսակից «քանի մը օր վերջ, որմե ետքը ամուսնացողները արտոնված կըլլան առագաստ մտնելու: Շատ տեղեր փեսան կնքահոր տանը կմնա, քանի պսակը վար չի առնված, իսկ պսակը վար առնելու գործողությունն էլ արտոնված էր քավորին»*[36]*: Սովորույթի համաձայն՝ մինչև նորապսակների առագաստ մտնելը, քավորը հարսի՝ մինչև կուրծքը հասնող հարսանեկան մետաքսե, թափանցիկ, ծայրերից կախված գույնզգույն, ընկույզի մեծությամբ շորե «փսկուլներով» «քողը» բարձրացնում էր մինչև քիթն ու բերանը. գործողություն, որ հանդիսականների մասնակցությամբ կատարվում էր թոնրի շուրջը: Հարսը «քողը» բարձրացնելու, «սանամոր աչքը բանալու» համար քավորից ստանում էր «փեշքեշ» կտոր կամ օսմանյան 1 մեճիդիե դրամ: Աղձնիքի հով-*

---

[32] *ԴԱՆ, տ. 13, էջ 26-27:*

[33] *ԴԱՆ, տ. 11, էջ 31, 44, տ. 13, էջ 27-28:*

[34] *Տե՛ս Ս. Ն. Նախապաշարումներ, սովորութիւններ Սղերդի մէջ և շրջակայքը.– «Բիւրակն», 1899, թիվ 38-39, էջ 615:*

[35] *Տե՛ս Ռ. Ն ա հ ա պ է տ յ ա ն. Աղձնիքահայերի ընտանիքը…, էջ 151:*

[36] *Տե՛ս Ս. Ն. նշվ. հոդվ., էջ 615:*

տային շրջանների հայկական գյուղերում այն կատարվում էր պսակից երեք օր անց. «սանամոր աչքը բանալու» համար, քողը կարճացվում էր այնքան, որ ծածկեր միայն դեմքը և այդպես մնում մինչև յոթ տարի: Սովորաբար 2-3 երեխա ունենալուց հետո էր միայն բացվում հարսի քիթն ու բերանը: Այն շորը, որով ծածկվում էր քիթն ու բերանը, կոչվում էր սավան[37]: *Դրանից հետո Սասունի կանայք գլխաշոր էին կրում, որը ծածկելու էր ծնոտն ու բերանը: Մեկ այլ տարբերակում նորահարսին հարսանիքից 15 օր անց «դարձ» էին տանում, քավորկինն էր «քողկածը» հանում և փոխարինում* փուշիով *կամ սավանով, որը կրելու էր մինչև 2-3 երեխա ունենալը*[38]*:*

Մինչև հարս ու փեսի «մեգդեղիլը», քավորը քանդում էր նաև փեսայի կապերը, հանում հագուստը, բացում, ինչպես վերը նշվեց, արյունոտ փակ կողպեքը, պատյանից հանում արնոտ դանակը կամ թուրը: Բ. Ժամկոչյանի հավաստմամբ, Հայնիում հարսանեկան արարողության ավարտից հետո, երկու գիշեր հարս ու փեսան իրար չէին տեսնում. «Առաջին գիշեր փեսան աներոջ «սիրոյն» կխնայեր և կպառկեր կնքահոր մոտ, որը իր փորձառական խրատներն էր տալու, իսկ հարսն էլ՝ կնքամոր մոտ: Վերջինս էլ իր մայրական թելադրական դասերն էր տալու: Երկրորդ գիշեր՝ զոքանչի սիրոյն կխնայեր: Երրորդ օրը ուրախությունները որով և հոգնությունները վերջ կգտնեին, ամեն ոք իր տուն կքաշվեր և փեսան հարսնաքրոջ կողմից կառաջնորդվեր առագաստեն ներս: Այդ երեք օրվան մեջ ազգականներ ու բարեկամներ իրենց հետ բերված կերակուրներով էին մասնակցում»[39]*: Նմանատիպ սովորույթի ենք հանդիպում նաև Ջավախքում, ուր հարսն առաջին գիշերը օգնում էր քավորին զգեստները հանել, անկողին մտնել, ապա ինքը պառկում իր եղբոր հետ, իսկ փեսան գնում և մտնում էր քավորի ծոցը*[40]*: Որոշ տեղերում քավորն ու հարսնեղբայրը առագաստի գիշերը մնում էին փեսայի տանը: Հենց իմացվում էր, որ տղան տիրացել է աղջկան, քավորը* թըրփանգը՝ *հրացանը, «տրաքցնում էր», հավ էր մորթում և արյունոտած նշանով ուղարկում հարսի մորը՝ որպես «պարզերեսության» նշան: Աղջկա մայրն էլ հավ էր մորթում և փլավի գլխին դրած պատասխան ուղարկում*[41]*:*

«Հարսը,– նշում է Խ. Սամուելյանը,– հանվեցնելով քավորին, խորհրդանշական ձևով կարծես հաստատում է այն իրավունքի գաղափարը, թե ինքը պատկանում է այդ գիշեր նրան և ոչ թե ամուսնուն, որը կնոջ փոխարեն պառկում է քավորի հետ միասին»[42]*:*

---

[37] *Տե՛ս ԴԱՆ, տ. 9, էջ 40-41: Տե՛ս նաև Ռ. Ն ա հ ա պ ե տ յ ա ն. Խուսափման սովորույթի դրսևորումները աղձնիքահայերի ընտանեկան կենցաղում.– «Բանբեր Երևանի համալսարանի», 2005, № 1, էջ 147:*

[38] *Տե՛ս ԴԱՆ, տ. 3, էջ 50-51:*

[39] *Բ. Ժ ա մ կ ո չ յ ա ն. Հայնի, Բեյրութ, 1952, էջ 70:*

[40] *Տե՛ս Ե. Լ ա լ ա յ ա ն. Երկեր, հ. 1, Երևան, 1983, էջ 163:*

[41] *Հմմտ.՝ Ս տ. Լ ի ս ի ց յ ա ն. Զանգեզուրի հայերը, Երևան, 1969, էջ 192-193: Ուշագրավ է, որ մինչև հարսին պարեցնելը և առագաստ մտնելը, թագվորին առնանգում էին ազապչարիները և ազատ արձակում միայն այն ժամանակ, երբ քավորը խոստանում էր մի խրախճանք կազմակերպել (տե՛ս Վ. Թ ե մ ո ւ ր ճ յ ա ն. Գամիրքի հայերը, էջ 127):*

[42] *Տե՛ս Խ. Ս ա մ ո ւ ե լ յ ա ն. Մայրական իրավունք, էջ 65-66:*

Մեզ ևս թվում է, որ հարսը այդ 1-2 օրերը անցկացրել է ոչ թե փեսայի, այլ նրա խմբի անդամների, մասնավորապես մեծավորի հետ, որն այս դեպքում անձնավորվում է քավորի մեջ:

Ուշագրավ է, որ բանահյուսական նյութերում բավական առատ ակնարկներ կան քավորի և սանամոր երբեմնի առնչությունների վերաբերյալ: Օրինակ՝

Սարեն իջավ ձիավոր,
Չեղավ յար, եղավ քավոր:

Կամ՝

Չեղավ յար, կանեմ քավոր:

Ա. Ղանալանյանը հիշատակում է մի ուշագրավ ավանդություն. «Ավուր մեկին քավորն ու սանամեր կերթան Ջոջ ձոր: Քավոր սանամոր խետ սիրող կենա (սիրաբանում է): Աստված կբարկանա ընտոնց վրեն ու երկուսին էլ իրար գրկած վախտն քար կդարձու: Չուրի մրկա էլ (մինչև հիմա էլ) էտ քարն կա, անուն՝ Քավոր-սանամեր»[43]:

Ծնված առաջնեկի վերաբերյալ էլ բանահյուսության մեջ պահպանվել են հետևյալ տողերը.

Յա հորն է նման,
Յա մորն է նման,
Յա էլ՝ քավորին է նման[44]:

Մեր գրառած նյութերում Աղձնիքի հարավային հովտային քրդախառն բնակեցված շրջաններում հայ ընտանիքները ստիպողաբար քավոր էին վերցնում քուրդ աղաներին, որոնց կամքով ու համաձայնությամբ պետք է կայանար հարսնացուի ընտրությունը և որոնց էլ պատկանում էր նորահարսի առաջին գիշերվա՝ հայ ընտանիքի բարոյական պատիվն ու արժանապատվությունը նսեմացնող իրավունքը: Ահա թե ինչու այդ զազրելի պահանջի դեմն առնելու համար հաճախ աղջիկներին ամուսնացնում էին դեռ օրորոցում կամ դեռահաս տարիքում: Խ. Սամուելյանը հետևություն է անում, որ հայրական իրավունքի հաղթանակով հալածվում են մայրական իրավունքի աշխարհայացքային շատ մնացուկներ, որոնցից է նաև խմբային ամուսնությունը: Դրա համար էլ նորահարսի նկատմամբ սահմանվում են շատ արգելքներ, օրինակ՝ պահանջվում է կնոջ կուսության պահպանում մինչև առագաստ մտնելը: Խմբային ամուսնական արգելքի հետևանք էր այն, որ նորահարսը գերդաստանում իրավունք չուներ խոսելու իր ամուսնու հետ օտարների ներկայությամբ, մինչև ա-

---

[43] *Ա. Ղ ա ն ա լ ա ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 65:*

[44] *Քավորի վերաբերյալ մի առակում, երբ քավորն անցնելիս է լինում սանամոր դռնով, վերջինս վախենում է, որ քավորը կարող է իրենց տուն գալ և տեսնել իրեն տան շորերով, ամոթից փախչում մտնում է թոնիրը: Քավորը մտնում է տուն և երբ հարցնում է, թե ո՞ւր է սանամերս, տանտիրուհին պատասխանում է, թե «երես գալու, դսնավոր շոր չուներ, թունդիր է մտել»: «Ղրից հեշտ գործ, վաղը քաղաք եմ գնում, սանամորս ի՞նչ շորացու կտոր բերեմ»: Սանամերը իբրև չխոսկան շշուկով թոնրից ասում է. «բարակ-բարակ»: «Բարակ-բարակ», թունդրաշրթից էլ բարակ», պատասխանում է քավորը (նյութը գրառել է Արուսյակ Սահակյանը:)*

ռաջին զավակ ունենալը մարդկանց ներկայանում էր երեսը քողով ծածկված, պահպանում էր չխոսկանություն, քավորի հետ ոչ միայն իրավունք չուներ խոսելու, այլև նրա ներկայությամբ երևալը մեղք էր համարվում: Մենք լիովին համամիտ ենք Խ. Սամուելյանի հետ, որ քավորը մարմնավորում է տղայի հոր, գերդաստանի նահապետի կերպարը[45]: Ազգագրական նյութերում երկուսի գործառույթներում բազմաթիվ նմանություններ ենք գտնում. նախ, մի դեպքում, հարսի գոտին կապում է տղայի հայրը, մյուս դեպքում՝ քավորը, մի դեպքում հարսնածը ղեկավարում է տղայի հայրը, քավորը մնում է փեսայի հետ՝ տանը, մի այլ դեպքում հարսնածը ղեկավարում է քավորը, երբ մասնակցում է երթին: Երկուսի հետ էլ նորահարսը պարտավոր էր չխոսկան լինել:

Պսակադրության ծեսում, եկեղեցի գնալու ճանապարհին, հարսի կողքին քավորն էր, և եկեղեցում համաձայնության բանաձևը փեսայի փոխարեն նա էր արտասանում: Շատ զգալի են առաջին գիշերվա նրա իրավունքի մասին ծիսական ակնարկները. հարսին նա էր նախապատրաստում առագաստ մտնելու, քանդում էր նրա բոլոր կոճակներն ու կապերը, հանում էր գոտին, որոշ բնակավայրերում նախորդ գիշերը նա գիշերում էր հարսի տանը, որտեղ հարսն էր նրան նախապատրաստում անկողին մտնելուն՝ լվանում ոտքերը, հանում զգեստները, նույնիսկ գլխավերևում նստած սպասում, մինչև նա կքնի: Թե՛ խաչեղբոր, թե՛ քավորի ծիսական պարտականությունները հիմնական գծերով պահպանվել են հայոց ժամանակակից հարսանիքում, իսկ սոցիալական պարտականություններն ավելացել են: Շատ արարողություններում հստակ նկատելի է, որ բազում սովորություններ քավորին վերագրում են մի արտասովոր ուժ, որի շնորհիվ նա կարողանում է պաշտպանել նորակազմ ընտանիքը, ապահովել նրա բարգավաճումը: Այսպես, եկեղեցում կամ թոնրի պսակի արարողության ժամանակ՝ նախքան խաչի գործածությունը, քավորը ձեռքի սուրը և պատյանը բռնում է նորապսակների գլխավերևում: Այդ սրի հովանու տակ կատարվում է պսակի արարողությունը, որը քավորի ձեռքում կախարդական ուժ է ստանում: Քավորը միշտ սուրը ձեռքին պտտվում է փեսացուի հետ: Փեսայի ներս ու դուրս անելիս, քավորն այն պահում է դռան վերևում, որ փեսան տակով անցնի: Սուրը չեզոքացնում, վանում է բոլոր չար ոգիներին[46]: Հարսանեկան ծիսակատարությունների ամբողջ ընթացքում քավորին վերապահված էր բացառիկ դեր՝ պաշտպանել «թագվորին» և «թագուհուն» անտեսանելի ու տեսանելի չարիքներից ու թշնամիներից:

Սասունում եկեղեցական պսակի արարողության ժամանակ քահանան վերցնում էր մետաքսե կարմիր ու սպիտակ բարակ թել և քավորի հետ ծայրերը ոլորելով՝ կազմում նարոտ: Նարոտի կարմիր գույնը փեսայի առնականության, ուժի խորհրդանիշ էր, իսկ սպիտակ գույնը՝ հարսի կուսության, անմեղության: Նարոտը խորհրդանշում էր նոր ընտանիքի ստեղծման գաղափարը: Նորապ-

---

[45] *Մուսալեռցիները քավորին անվանում էին* փիսաղբար *(փեսայի եղբայր) կամ* պուպ *(հայր, պապ): Վերջինս թերևս խորհրդանշում է գերդաստանի նահապետի գործառույթի անցումը քավորին:*

[46] *Տե՛ս Ռ. Ն ա հ ա պ ե տ յ ա ն. Խուսափման սովորույթի դրսևորումները…, էջ 48, 50:*

սակները չպետք է ամուսնական հարաբերություն ունենան, մինչև որ քահանան, եթե նա չլինի, ապա քավորը հատուկ ծիսակատարությամբ «թագ վերացումով» չհանի նարոտը, որից հետո հարս ու փեսան արդեն կարող են առագաստ մտնել: Ժողովուրդը, ինչպես դիպուկ է նկատել Խ. Սամուելյանը, ուրիշ կերպ է բացատրել այս երևույթը. նրա կարծիքով այդ երկու գիշերը չար ոգիներն են վիտում նորապսակների շուրջը և պատրաստ են վնասելու, մանավանդ նորափեսային առնական ընդունակությունից զրկելու[47]*: Սակայն երբ վերոհիշյալ սովորությունը դիտում ենք պատմական զարգացման տեսակետից, ապա այդ երևույթը պիտի համարել խմբակային ամուսնության մնացորդ, երբ հարսը պարտավոր էր, ըստ սովորութական իրավունքի, մի երկու օր սեռական հարաբերության մեջ մտնել փեսայի ընկերների հետ, նախքան ամուսնու հետ զուգավորվելը:… Ահա այս վաղնջական սովորույթի իմաստն է կաղապարվել խորհրդանշական ձևով* նարոտի *և* թագվերացումի *սովորույթների մեջ*[48]*:*

Այսպիսով, մեր գրառած նյութերի և հրապարակում եղած ուսումնասիրությունների քննությունից պարզ է դառնում, որ հայոց մեջ քավորի կարգավիճակի առաջացման ակունքները տանում են դեպի մարդկության պատմության հնագույն ժամանակները:

КРЕСТНЫЙ ОТЕЦ У АРМЯН
(По материалам этнографических данных армян Агдзника)

РАФАЕЛЬ НААПЕТЯН

Р е з ю м е

В традиционной и современной армянской свадьбе крестный отец – кум руководит всем обрядовым комплексом и играет важную роль, и поныне имея определенную функцию как в предсвадебной, так и в свадебной и послесвадебной обрядности. Он руководил обрядами резания быка, бритья жениха, одевания жениха и невесты, повязания пояса жениху, сватания, венчания, брачной ночи. Присутствие крестного отца обязательно во время венчания в качестве официального свидетеля во время церковных обрядов. В течение всего свадебно-обрядового комплекса куму предписывается исключительная роль–защитить “царя”- жениха и “царицу”- невесту от видимых и невидимых зол. Его роль важна и в дальнейшей жизни поженившихся, а также в судьбе их детей. У каждой семьи был кум, и почти везде кумовство было наследственным. Кум был святыней не только для родовой семьи, но и для всего рода. На тему древности происхождения института кумовства, согласно мнению Х. Самуеляна, в личности кума сохранились сюзеренное право, честь и уважение кланового патриарха. В особенности об этом свидетельствует поведение женщин, в частности, невесток, которые испытывали особый стыд, избегали его. Эти обычаи избегания напоминают традиционные законы и нормы патриархального строя, в свое время направленные против промискуитетных отношений, распространенных в эпоху матриархата. Кум олицетворяет патриарха рода жениха. Имеется множество совпадений функций двух персонажей: в одном случае пояс жениху повязывает отец, в другом – кум, в одном случае сватовством руководит отец, а кум

[47] *Տե՛ս Խ. Ս ա մ ո ւ է լ յ ա ն. Մայրական իրավունք, էջ 64:*
[48] *Նույն տեղում:*

остается с женихом в доме, в другом – кум руководит сватовством, участвует в свадебном шествии. До обзаведения детьми и внуками на невестку наложено табу общения с обоими.

GODFATHER OF ARMENIANS
(According to ethnographic data of Armenians of Aghdznik)

RAPHAEL NAHAPETYAN

S u m m a r y

In the traditional as well as in the contemporary Armenian wedding ceremony the godfather manages the whole ritual complex. He plays an important role and has maintained a certain function in the ceremonies of wedding as well as those preceding and following wedding up to now. He supervised the ceremonies of “bull slaughtering”, shaving the bridegroom, dressing the bridegroom and the bride, knotting the belt to the bridegroom, marriage seeking rite, matrimony, connubial night. The godfather’s presence is obligatory during the matrimony as an official witness of the church ceremonies. During the whole marriage-wedding ritual complex the godfather was prescribed an exceptional role – to protect the “king”- bridegroom, and the “queen”-bride from visible and invisible mean powers. His role is important in the following life of the married as well as in their offshoots’ fate. Every family had its own godfather, and almost everywhere this function was hereditary. The godfather was not only sacred for the family, but also for the whole kin. On the topic of deep archaism of the godfather institute, according to Kh. Samuelyan’s opinion, the suzerain right, honour and respect of a kin patriarch are preserved in the personality of the godfather. Especially behaviour of women, in particular, daughters-in-law who felt special shyness, avoided him. This tradition of avoidance resembles traditional norms of the patriarchal system, formerly aimed at extermination of the promiscuity widespread in the matriarchal times. Godfather is an embodiment of the bridegroom’s kin patriarch. Many functions of the godfather coincide with functions of the bridegroom’s father: in one case the father ties the belt to the bridegroom, in another case – the godfather does, in one case the father manages matrimony, and the godfather stays at home with the bridegroom, in another case – the godfather manages the ritual, taking part in the wedding procession. As long as the daughter-in-law has no children and grandchildren, her communication with both of them is prohibited.